ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Սոցիալական աուդիտ

Վեդի համայնքի 2018 թվականի բյուջեի ընտրանքային ցուցանիշների

22.01.2019

Բովանդակություն

Բովանդակություն 2

Նախաբան 3

Վեդի համայնքի 2018 թվականի բյուջեի ընտրանքային ցուցանիշների սոցիալական աուդիտ 5

Գծապատկեր 1. Համայնքի 2018թ. բյուջեի մուտքերի կառուցվածքը, հազար դրամ 5

Գծապատկեր 2. Համայնքի 2018թ. բյուջեի եկամուտներն ըստ վարչական և ֆոնդային մասերի, հազար դրամ 5

Գծապատկեր 3. Համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող՝ 2018թ. բյուջեի եկամուտները՝ ՀՀ դրամով, հազար դրամ 6

Աղյուսակ 1. Համայնքի բյուջեի մուտքերի կատարողականը, հազար դրամ 6

Գծապատկեր 4. Համայնքի 2018թ. բյուջեի մուտքերի կատարողականը, հազար դրամ 7

Աղյուսակ 2. Համայնքի 2018թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների) 8

Գծապատկեր 5. Համայնքի 2018թ. բյուջեի «իրական ծախսերի» կառուցվածքը, հազար դրամ 9

Գծապատկեր 6. Համայնքի 2018թ. բյուջեի ընթացիկ ծախսերի կառուցվածքը, հազար դրամ 9

Աղյուսակ 3. Համայնքի 2018թ. բյուջեի ծախսերի կատարողականը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների) , հազար դրամ 10

Աղյուսակ 4. Համայնքի 2018թ. բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների) , հազար դրամ 10

Աղյուսակ 5. Համայնքի 2018թ. բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների (տեսակների) , հազար դրամ 11

Գծապատկեր 7.Համայնքի 2018 բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը, հազար դրամ 12

Վեդի համայնքի 2018թ-ի բյուջեի միջոցառումների ոչ ֆինանսական ընտրանքային ցուցանիշների մոնիթորինգ 13

Սոցիալական աուդիտի իրականացման ընթացքում քաղված դասեր 15

Նախաբան

Սոցիալական աուդիտը մի գործընթաց է, որ ներառում է համայնքի կողմից տարբեր ոլորտներում ծախսվող գումարների նպատակայնության և արդյունքների ուսումնասիրությունը և դրանց մասին բնակչությանն իրազեկումը:

Սոցիալական աուդիտն ուղղված է ապահովելու համայնքային ծրագրերի իրականացման թափանցիկությունը, բացահայտելու հանրային ծրագրերի իրականացման անհամապատասխանությունները և առաջարկելու բարելավումներ՝ քաղված դասերի հիման վրա:

Բացի վերոնշյալից, սոցիալական աուդիտը հակված է ստանալու հետևյալ արդյունքները՝

- Հավաքագրել ապացույցների վրա հիմնված, ճշգրիտ և անկողմնակալ ընկալվող տեղեկատվություն
- Շահառուների շրջանում տեղական ծառայություններ մատուցողների նկատմամբ ձևավորել իրազեկվածություն, վստահություն:
- Բարելավել կառավարման մարմինների փաստաթղթերի և տեղեկատվության մատչելիությունը, նրանց գործելակերպի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը քաղաքացիների համար:
- Հզորացնել կառավարման մարմինների վարքագծի վրա քաղաքացիների ներգործելու կարողությունները:

Համայնքում ուսումնասիրված ոլորտներում ընտրված ծրագրի պատշաճ իրականացումն ապահովելու համար սոցիալական աուդիտը պատասխանել է հետևյալ հարցերին.

- Արդյո՞ք որոշակի ծրագրերի համար հատկացված գումարները փաստացիորեն տեղ են հասել:
- Որո՞նք են ծրագրի ցուցանիշները:
- Արդյո՞ք դրանք իրականացվել են:
- Արդյո՞ք օգտագործվել են սահմանված քանակի և որակի միջոցներ:
- Արդյո՞ք ծրագրի համար հատկացված դրամական միջոցներն օգտագործվել են այն նպատակներով, ինչի համար դրանք հատկացվել էին:

Համայնքի սոցիալական աուդիտի ընթացակարգը ներառել է չորս փուլ.

1. բովանդակության եւ մեխանիզմների վերաբերյալ փաստաթղթերի վերլուծություն (հասկացություններ, ռազմավարություններ, համայնքային ծրագրեր և այլն),
2. սոցիոլոգիական մոնիտորինգի հիման վրա ախտորոշիչ-սոցիոլոգիական ախտորոշում.
3. գնահատում - ակնկալվող նպատակներից, արդյունքներից շեղումների պատճառների եւ աստիճանի սահմանում: Հիմնականում այն ներառում է տեղական իշխանության գործունեության արդյունավետության վերլուծությունը,
4. խորհրդատվություն, ներառում է միջոցառումների մշակումը, համայնքային կառավարման բարելավման, խախտումների վերացման, գործունեության մեջ շեղումների եւ դրանց սոցիալական արդյունավետության բարձրացման գործնական առաջարկությունները:

Սոցիալական աուդիտն իրականացվել է վերապատրաստման դասընթացներին մասնակցած համայնքի բնակիչների կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրված տեղեկատվության և համացանցում առկա ռեսուրսների ուսումնասիրման միջոցով:

Դասընթացների արդյունքում մասնակիցները տեղեկացել են մասնակցության սահմանման, կարևորության և սկզբունքների մասին: Նրանց մոտ հստակ պատկերացումներ են ձևավորվել կառուցողական ներգրավվածության, կատարողականի մասնակցային մոնիտորինգի և նրա ինչ հնարավոր քայլերի մասին:

Դասընթացի մասնակիցների կողմից իրականացվել են հետևյալ քայլերը՝

- նախապատրաստական գործողությունների կատարում՝ ֆինանսական հաշվետվությունների, ծրագրերի իրականացման մասին տվյալների ձեռք բերում, համացանցային ռեսուրսների ուսումնասիրում,
- Ծրագրերի չափանիշների քարտեզագրում և չափանիշների սահմանում՝ ըստ ծրագրի ակնկալվող արդյունքների և գործողությունների:
- Ծրագրերի և բյուջեների արդյունքների մոնիթորինգի իրականացում
- Արդյունքների վերլուծություն և ամփոփում:

Վեդի համայնքի 2018 թվականի բյուջեի ընտրանքային ցուցանիշների սոցիալական աուդիտ

Վեդի համայնքի 2018թ. բյուջեի ընդհանուր մուտքերը փաստացի կազմել են 339965.3 հազար դրամ[1]: Մուտքերի կեսից ավելին՝ 197899 հազար դրամ (55.0%), ձևավորվել են պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Բյուջեի մուտքերի մնացյալ մասը ձևավորվել է ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի՝ 17366 հազար դրամ (4.8%), գույքահարկի՝ 46365.8 հազար դրամ (12.9%), հողի հարկի՝ 24073.6 հազար դրամ (6.7%), այլ եկամուտների հաշվին՝ 58054.9 հազար դրամ (16.1%) (գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Համայնքի 2018թ. բյուջեի մուտքերի կառուցվածքը, հազար դրամ



2018թ. վարչական բյուջեի եկամուտները կազմել են բյուջեի ընդհանուր եկամուտների 99.1 %-ը:

Գծապատկեր 2. Համայնքի 2018թ. բյուջեի եկամուտներն ըստ վարչական և ֆոնդային մասերի, հազար դրամ

[1] Համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների կազմում վարչական և ֆոնդային մասերի եկամուտների տեսակարար կշիռների հանրագումարը գերազանցում է 100 %-ը: Պատճառն այն է, որ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից օրենքով թույլատրվում է գումար հատկացնել համայնքի բյուջեի ֆոնդային մաս: Հատկացման գումարը դիտարկվում է որպես եկամուտ նաև ֆոնդային բյուջեում, այլ կերպ ասած՝ կրկնակի անգամ գրանցում է տեղի ունենում: Սակայն, իրականում համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը չի դիտարկվում որպես եկամուտ համայնքի ընդհանուր բյուջեի համար: Արդյունքում, համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտների հանրագումարը գերազանցում է համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների գումարը՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացման գումարի չափով:

2018թ.-ում համայնքի բնակչության 1 շնչին ընկնող փաստացի եկամուտներն վարչական բյուջեի մասով կազմել են 25733.4 ՀՀ դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մասով՝ 768 ՀՀ դրամ (գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող՝ 2018թ. բյուջեի եկամուտները՝ ՀՀ դրամով, հազար դրամ



2018թ. բյուջեի մուտքերի (առանց դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների) կատարողականը պլանի նկատմամբ կազմել է 102.5% (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Համայնքի բյուջեի մուտքերի կատարողականը, հազար դրամ

Հ/հ	Ցուցանիշներ	պլանային	փաստացի	կատարողականը տարեկան պլանի նկատմամբ
1	**Ընդամենը մուտքեր**	331643,0	339965,3	102,5%
2	Հողի հարկ	24000,0	24073,6	100,3%
3	Գույքահարկ	41500,0	46365,8	111,7%
4	Տուրքեր	13382,3	13572,0	101,4%
5	Այլ եկամուտներ	55040,5	58054,9	105,5%
6	Պաշտոնական դրամաշնորհներ	197720,2	197899,0	100,1%
7	Ոչ ֆին. ակտիվների իրացումից մուտքեր	18526,0	17366,0	93,7%

Ընդ որում, առանձին հոդվածների գծով դիտարկելիս, կարելի է նկատել, որ առկա է պլանների զգալի գերակատարումներ: (գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Համայնքի 2018թ. բյուջեի մուտքերի կատարողականը, հազար դրամ



2018թ. բյուջեի փաստացի «իրական ծախսերի» մեծ մասը՝ 43.5 %-ը կազմում են կրթության ոլորտի ծախսերը: Համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն նաև ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության ոլորտների ծախսերը՝ 48.9 %:

2018թ. դրությամբ, ընդհանրապես ծախսեր չեն կատարվել պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության, առողջապահության ոլորտներում: Մյուս ոլորտներում կատարված ծախսերը բավականին փոքր մասնաբաժին ունեն ընդհանուր ծախսերի կազմում (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Համայնքի 2018թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների)

Հ/հ	Ցուցանիշներ	փաստացի		Հ/հ	Ցուցանիշներ	փաստացի	
		գումար	տես. կշիռ			գումար	տես. կշիռ
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	337203,0	100,0%		ԸՆԴԱՄԵՆԸ «ԻՐԱԿԱՆԾԱԽՍԵՐ» (ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ)	354569,1	100,0%
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	67543,9	20,0%	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	67543,9	19,0%
2	Պաշտպանություն	0,0	0,0%	2	Պաշտպանություն	0,0	0,0%
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0,0	0,0%	3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0,0	0,0%
4	Տնտեսական հարաբերություններ	-7653,3	-2,3%	4	Տնտեսական հարաբերություններ (ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ)	9712,7	2,7%
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	18259,4	5,4%	5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	18259,4	5,1%
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	69568,3	20,6%	6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	69568,3	19,6%
7	Առողջապահություն	0,0	0,0%	7	Առողջապահություն	0,0	0,0%
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	25697,1	7,6%	8	Հանգիստ, մշակույթ և կրոն	25697,1	7,2%
9	Կրթություն	154180,8	45,7%	9	Կրթություն	154180,8	43,5%
10	Սոցիալական պաշտպանություն	9606,9	2,8%	10	Սոցիալական պաշտպանություն	9606,9	2,7%
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	0,0	0,0%	11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	0,0	0,0%

2018թ. բյուջեի «իրական ծախսերի» մեծ մասը՝ 95 %-ը կազմել են ընթացիկ ծախսերը և միայն 5 %-ն են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերը (գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Համայնքի 2018թ. բյուջեի «իրական ծախսերի» կառուցվածքը, հազար դրամ



Ընթացիկ ծախսերի մեծ մասը՝ 51.6%-ը, կազմել են դրամաշնորհները: Մնացյալ ծախսատեսակներն՝ ըստ դրանց տնտեսագիտական դասակարգման, մասնաբաժին ունեն ընթացիկ ծախսերի կազմում (գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Համայնքի 2018թ. բյուջեի ընթացիկ ծախսերի կառուցվածքը, հազար դրամ



2018թ. բյուջեի «իրական ծախսերը» պլանի նկատմամբ կատարվել են 98.9 %-ով: (աղյուսակներ 3 և 4):

Աղյուսակ 3. Համայնքի 2018թ. բյուջեի ծախսերի կատարողականը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների) , հազար դրամ

Հ/h	Ցուցանիշներ	պլանային	փաստացի	2018թ. բյուջեի կատարողականը պլանի նկատմամբ
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, որից՝	339969,0	337203,0	99,2%
1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ**	69246,0	67543,9	97,5%
2	**Պաշտպանություն**	0,0	0,0	0,0%
3	**Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն**	0,0	0,0	0,0%
4	**Տնտեսական հարաբերություններ**	-15465,0	-7653,3	49,5%
5	**Շրջակա միջավայրի պաշտպանություն**	18400,0	18259,4	99,2%
6	**Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն**	72136,0	69568,3	96,4%
7	**Առողջապահություն**	0,0	0,0	0,0%
8	**Հանգիստ, մշակույթ և կրոն**	25950,0	25697,1	99,0%
9	**Կրթություն**	159982,0	154180,8	96,4%
10	**Սոցիալական պաշտպանություն**	9720,0	9606,9	98,8%
11	**Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր**	0,0	0,0	0,0%

Աղյուսակ 4. Համայնքի 2018թ. բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը՝ ըստ գործառական դասակարգման հոդվածների (ոլորտների) , հազար դրամ

Հ/h	Ցուցանիշներ	պլանային	փաստացի	կատարողականը պլանի նկատմամբ
	ԸՆԴԱՄԵՆԸ «ԻՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ» (ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ)	358495,0	354569,1	98,9%
1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ**	69246,0	67543,9	97,5%
2	**Պաշտպանություն**	0,0	0,0	0,0%
3	**Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն**	0,0	0,0	0,0%
4	**Տնտեսական հարաբերություններ** (ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ)	3061,0	9712,7	317,3%

5	**Շրջակա միջավայրի պաշտպանություն**	18400,0	18259,4	99,2%
6	**Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն**	72136,0	69568,3	96,4%
7	**Առողջապահություն**	0,0	0,0	0,0%
8	**Հանգիստ, մշակույթ և կրոն**	25950,0	25697,1	99,0%
9	**Կրթություն**	159982,0	154180,8	96,4%
10	**Սոցիալական պաշտպանություն**	9720,0	9606,9	98,8%
11	**Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր**	0,0	0,0	0,0%

Ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների դիտարկելիս, կարելի է տեսնել, առկա են ինչպես զգալի գերակատարումներ, այնպես էլ թերակատարումներ (աղյուսակ 5, գծապատկեր 7):

Աղյուսակ 5. Համայնքի 2018թ. բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների (տեսակների) , հազար դրամ

Հ/հ	Ցուցանիշներ	պլանային	փաստացի	կատարողականը պլանի նկատմամբ
1	**ԸՆԴԱՄԵՆԸ «ԻՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ»** (ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ավելացմամբ)	339969,0	337203,0	99,2%
2	**Ընթացիկ ծախսեր**	321443,0	319837,0	99,5%
3	Աշխատանքի վարձատրություն	85017,3	84872,4	99,8%
4	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	59933,7	58875,6	98,2%
5	Տոկոսավճարներ	0,0	0,0	0,0%
6	Սուբսիդիաներ	0,0	0,0	0,0%
7	Դրամաշնորհներ	165192,0	165029,0	99,9%
8	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	10160,0	9993,3	98,4%
9	Այլ ծախսեր	1140,0	1066,8	93,6%
10	**Ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսեր**	18526,0	17366,0	93,7%
11	Հիմնական միջոցներ	38526,0	28321,3	73,5%
12	Պաշարներ	0,0	0,0	0,0%
13	Բարձրարժեք ակտիվներ	0,0	0,0	0,0%
14	Չարտադրված ակտիվներ	-20000,0	-10955,3	54,8%

Գծապատկեր 7.Համայնքի 2018 բյուջեի «իրական ծախսերի» կատարողականը, հազար դրամ



2018թ. բյուջեի ծրագրերում սոցիալական աուդիտի են ենթարկվել 2 ծրագրեր: (աղյուսակ 6):

Համայնքի բյուջեի ծախսերը բաշխված են 3 տեսակի՝ ընթացիկ ծախսերին առնչվող, հանրությանը տրամադրվող տրանսֆերտներին առնչվող և ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերին առնչվող ծրագրերի միջև: Ծախսերի գերակշիռ մասը՝ մոտ 91 %-ը բաժին է հասել ընթացիկ ծախսերին առնչվող ծրագրերին, որոնք իրենց էությամբ հանրային ծառայությունների մատուցման ուղղված ծրագրեր են (գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Համայնքի 2018**թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ բյուջետային ծրագրերի, հազար դրամ**



Վեդի համայնքի 2018թ-ի բյուջեի միջոցառումների ոչ ֆինանսական ընտրանքային ցուցանիշների մոնիթորինգ

Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ									
Հ/հ	Ծրագրի անվանումը	Միջոցառման անվանումը	Միջոցառման տեսակը	Ցուցանիշները		2018 թ., տարեկան			
				տեսակը	անվանումը	պլան	փաստ	շեղում/մեկնաբանություն
1.	Աղբյուրների կառավարում	Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության մակարդակի բարձրացում:	Ծառայություն	Քանակական	Համայնքում իրականացվող հանրային քննարկումների,լսումների թիվը	6	5	Ծրագրի ժամկետների տեղափոխման արդյունքում 1 հանրային լսում չի իրականացվել
					Համայնքի ավագանու նիստերի թիվը	6	10	Գումարվել են 4 արտահերթ նիստեր
					Համայնքի աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը	4	4	ՀԿՏՀ, Գանձապետական համակարգի ծրագիր, Օրակլ, Հեռախոսային գործիք հարցումների համար
				Որակա կան	Համայնքի պաշտոնական ինտերնետային կայքի առկայությունը	Այո	այո	Որպես ինտերնետային կայք օգտագործվում է ՀԿՏՀ-ն: Համայնքի կայքի հասցեն է՝ http://vedicity.am
					Համայնքի աշխատակազմում ՀԿՏՀ առկայությունը	Այո	Այո	Համայնքի աշխատակազմի բոլոր համակարգիչներում առկա է ՀԿՏՀ համակարգը
					Համայնքում բնակիչների մասնակցության կարգերի առկայությունը և գործնականում դրանց կիրառումը	Այո	Այո	Կարգերը կիրառվում են ըստ անհրաժեշտության
				Ժամկե տայնու թյան	Համայնքում կիրառվող համակարգչային ծրագրերի թարմացման հաճախականությունը	1	1	
					Համայնքի պաշտոնական ինտերնետային կայքի գործունեության օրերի թիվը	365	355	Հոսանքի անջատումների պատճառով
				Ծախսեր, հազար դրամ		700	688	Տնտեսումն առաջացել է գնահարցումների արդյունքում:

Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ									
Հ/հ	Ծրագրի անվանումը	Միջոցառման անվանումը	Միջոցառման տեսակը	Ցուցանիշները		2018 թ., տարեկան			
				տեսակը	անվանումը	պլան	փաստ	շեղում/մեկնաբանություն	
2.	Վեղի քաղաքի համայնքային ոռոգման և վերականգնվող էներգետիկայի ծրագիր	Ոռոգման համակարգի ջրախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում, ոռոգելի կանոնչափաս տարածքների ընդլայնում	Կապիտալ	Քանակական	Նորակառույց ջրամբարի ծավալը, խմ	30	0	Փոխհամաձայնություն է ձեռք բերվել ծրագիրն իրականացնել 2019թ.-ին, որի պատճառով էլ ցուցանիշները փաստացի չեն գնահատվել:	
					Տեղադրված դիտահորերի քանակը, հատ	8-12	0		
					Տարբեր չափի փականների քանակը, հատ	15-20	0		
					Ֆոտովոլտային կայանի տարեկան արտադրանքը, կՎժ	33.3	0		
				Որակական	Վերականգնված ոռոգման համակարգ՝ փոխարինված նոր պոլիէթիլենյա 2000մ խողովակներով	Առկա	Առկա ճէ		
					Տնտեսված էլեկտրաէներգիայի քանակը, անգամ	3.	0		
					Տեղադրված արեգակնային էլեկտրակայան	19 կՎտ	0		
					Ոռոգման ցանցի կորուստների նվազում,%	50	0		
				Ժամկետայնության	Ծրագրի իրականացման տևողությունը, ամիս	9	0		
				Ծախսեր, հազար դրամ		70818.2 /42195	0[2]	Ծրագրի ընդհանուր գումար/համայնքի ներդրում	

[2]Գումարը պլանավորված է եղել վարչական բյուջեի պահուստային ֆոնդում և համայնքի ավագանու որոշմամբ ծախսվել է մարզադաշտի ցանկապատման, տրիբունայի կառուցման և ծննդատան մուտքի հատվածի ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար:

Սոցիալական աուդիտի իրականացման ընթացքում քաղված դասեր

Համայնքային ռեսուրսների հանրային կառավարման տեսակետից սոցիալական աուդիտը որակվում է որպես բարելավում ապահովող սոցիալական գործունեության տեսակ, իր մեջ ներառելով համակարգի սոցիալական ախտորոշումը, արդյունավետության գնահատումը, տեղական ինքնակառավարման մարմինների խորհրդատվությունը:

Մշակված գործիքակազմը, որը հարմարեցված էր համայնքային մակարդակով իրականացվող հետազոտության սոցիոլոգիական մեթոդներին, իր կառուցվածքով ներկայացնում էր սոցիալական աուդիտի թեմաները, օբյեկտները, սկզբունքները, նպատակները, գործառույթները, համակարգը, ընթացակարգը, մեթոդները, պայմանները, արդյունքները:

Սոցիալական աուդիտի իրականացումից առաջ կազմակերպված դասընթացները հնարավորություն տվեցին մարդկանց ձեռք բերել որոշակի կարողություններ՝ իրենց կողմից հանրային վերահսկողություն իրականացնելու կարևորության գնահատման, որոշակի գործիքների կիրառման հնարավորության, որոշումների կայացման ժամանակ իրենց դերակատարության և կարծիքի ամրագրման ապահովման մասերով:

Բայց պետք է նշել, որ անկախ ամեն ինչից կան հանրության կողմից հետազոտությունների օգտագործման սահմանափակումներ: Տեղական բյուջեները, հատկապես սուբսիդավորվող համայնքներում, չեն տրամադրում միջոցներ սոցիոլոգիական մոնիտորինգի իրականացման համար:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ համայնքում ընդամենը մի քանի ոլորտներում կատարված սոցիալական աուդիտի արդյունքը հիմք է հանդիսանալու տեղական իշխանության կողմից 2019թ-ի աշխատանքի և ծրագրերի կանխատեսման, գնահատման եւ բարելավման համար: